ԹԱՌԱՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԻԶՄԻՐ ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884 — ԹԻՒ 1326

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՀԱՏՐ 4 ՄԷԹԱԼԻՔ | ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉԱՐԻՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ | ՀԱՏՐ 4 ՄԷԹԱԼԻՔ

Յ. Կ. ՍԱՂԱՖԵԱՆ
Համարաւոր — Տնօրէն

ՏԱՐԵԳԻՆ ԿԱՆԽԻԿ
ԻԶՄԻՐ . . . Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐՍԸ . . . Մէճիտիէ 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ . Ֆրանք 25

ԾԱՆՈՒՑԱԳԻՆ
3 դրուշ տողը Մէկ անգամ
2 դրուշ . . . . Երկու անգամ
60 փարա . . . Երեք անգամ

Զ. Գ. ՊԵԼԼԻՔԵԶԵԱՆԸ
Հիմնադիր

Ա. Կ. ԱՂԱԶԱՐԵԱՆ, կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վերաբերեալ բոլոր գործերը։ Շիշէ-ճիլէր ճատտէսի Զինկըրլարա ծէրիանէ

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ կը վերաբերի, տնօրէնին կը դրկուի։ Էվլիի խան թիւ 17

ԻԶՄԻՐ ՇԱԲԱԹ, 20/1 ՆՈՅԵՄԲ. 1884

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն և վերջ)

Սակայն Պատր. Տեղապահութեան խնդրոյն առթիւ Աբէլեանի հրատարակութիւններու նկատմամբ՝ ընդհանուր տեսակէտով ինչ ինչ դիտողութիւններ ընելով՝ պարտաւորութիւնը չվերջանար, այլ դեռ ևս կը մնայ խօսիլ միևնոյն տեսութիւններու այն կէտերն վրայ՝ ուր Աբէլեան իրեն՝ մատնաւորելով՝ կը ներկայէ վերջապէս իր ընթերցողին։ Վասն զի եթէ մենք գաւառ. Առաջնորդներու Պոլսոյ եպիսկոպոսներուն վրայ ունեցած այն առաւելութիւնը, զոր Աբէլեան ցոյց կը տայ՝ հերքեցինք, պատճառը սա է զի ոչ թէ կը պնդենք որ ընթերցողն Տեղապահը անվրէպ այս վերջին դասն ըլլայ՝ հապա ձեռնարկուած քննութեան մը թերի կողմերը կ'ուզենք ցոյց տալ, մինչդեռ խնդրոյն մատնաւորեալ կէտը՝ մեզի ուղղակի վերաբերութիւն մ'ունենալով՝ աւելի ճշգրիտ և կատարեալ տեղեկութիւններ կրնանք ունենալ բնակամաբար դայս ևս աւելի ուղիղ և արդար կերպով դատելու։

Առաջնորդ ալ կայ, Առաջնորդ ալ կայ, կ'ըսէ Աբէլեան, և կը մղէ թէ՝ կան Առաջնորդներ, որոնք բնաւ արդիւնք չեն տուած։ Օրինակի համար, կը յարէ, բազում տարիներէ հետէ պաշտօն վարելով հանդերձ, չեն կրցած ոչ թէ ընդհանուր թեմին, այլ իրենց նստած քաղաքին իսկ ազգ. դպրոցաց վիճակը բարւոքելփոքր ինչ, և եթէ այլախօս են տեղւոյն ազգայինք, վարժեցնել զանոնք հայախօսութեան։

Բայց միթէ Դեր. Մելքիսեդեկի Իզմիր գալն ի վեր մեր ազգ. դպրոցներու վիճակը բարեկարգուած է. — Ոչ երբէք. արդէն քանիցս կրկին կրկին հրատարակութիւններով անոնց ցաւալի կացութիւնը նկարագրած ենք, եթէ Աբէլեան Աբշլոյը Դեր. Մելքիսեդեկի հակառակորդ թերթ մը կարդալով՝ անոր դիտողութիւնները ի նկատի չառնուր, և եթէ այս առթիւ Աբէլեան Մ-ոյ լռութիւնը փոխանակ նորա տկարութեան և անիրաւութեան վերադրելու՝ արհամարհական կը կարծէ, թող գտնէ պարագաները և իրողութիւնները՝ քննէ և ըստ այնմ վճիռ մը արձակէ։ Ցայտնիէ որ Իզմիրի մէջ ազգ. պաշտօնի չհասնիր Դեր. Մելքիսեդեկի հակառակորդ մարդ մը. անշուշտ Սահմանադրութեան օրինաց մէջ այսպիսի յօդուած մը բնաւ պէտք է, ազգ. դպրոցներու մասին մեր դիտողութիւններէն քիչ վերջը կը նշարուի Ուսումնական Խորհուրդ մը, և Ս. Առաջնորդին պաշտօնապէս կը յայտարարէ՝ զի եթէ դպրոցներու տարեկան հաստատին վրայ 2500 մէճիտի դումար մը չբարդուի՝ չկրնար այդ պաշտօնը ըստանձնել. այս առաջարկի հեղինակներն եթէ ոչ Դեր. Մելքիսեդեկի կուսակից՝ գէթ Նորին Սրբազնութեան հակառակորդ ալ չեն. ուստի ոչ թէ ներքին խորհուրդ կամ մասնաւոր նկատում ունենալով՝ հապա դպրոցներու մէջ հիմնական բարեփոխութեան մը պէտքը զգալով՝ ծախուց յաւելումը կը պահանջեն. արդ Դեր. Մելքիսեդեկ ինչո՞ւ 1876էն իվեր չ'զգաց այդ պէտքը, ինչո՞ւ անոր դարմանմը չտարաւ. միթէ Աբէլեան կրնայ այս մասին մեզի իւր ընթերցին արդարացնող պատասխան մը տալ որպէսզի մենք ալ համոզուինք թէ ինչ է այն ժրութիւն ինչ է այն գործնեութիւն և ողջմտութիւն զոր կը գովարարէ։

Գանք միւս պարագային՝ յայտնի է որ մեր գաւառի ազգայինք բոլորովին տաճկախօս կամ այլախօս չեն. բայց Ցնողայ մէջ ոմանք իրենց զաւակներուն հետ անոնց մանկութեան միջոցին յունարէն կը խօսին. Մեծ. Մամուրեան այս թերութիւնը կ'դարձէ, Դեր. Մելքիսեդեկ սատկ նորա տունը կը դնուի. միթէ փոփոխութիւն մը կրած է նորա այս անհեթեթ և յոռի սովորութիւնը. — քաւ լիցի. երբ Մեծ. Մամուրեանի պէս խմբագիր մը, դասատարակ մը, դպրոցներու տնօրէն մը անկարող կը լինի կամ անտարբեր կը գտնուի որ հայախօս ընել. ի՞նչպէս ուրեմն յանցաւոր համարուին ընդարձակ գաւառներու այն Առաջնորդները, որոնք տեղւոյն բոլոր ազգայինները այլախօս ըլլալով՝ չեն կարողացած հայախօսութեան վարժեցնել։

Նոյն իսկ մեր քաղաքի չափահաս ազգայիններու լեզուն, մանաւանդ երիկ մարդերու լեզուն, որ կամ տաճկերէնով խառն է, կամ բոլորովին տաճկերէն է, որևիցէ փոփոխութիւն մը կրած է արդեօք. միթէ մինչև անդամ դպրոցէն մեկնող թէ տղայ և թէ աղջիկ աշակերտները չենք տեսներ որ տակաւին չեն կրնար երկու բառ իրարու քով կցելով պարզ հայերէն մը խօսիլ։ Մենք այս դիտողութիւնները չեինք ըներ՝ եթէ Աբէլեան Տեղապահ կամ Պատրիարք ընտրուելի անձէն՝ ընդհանուր կերպով խօսելով այսպիսի բարեմասնութիւն մը չփնտռէր, բայց որովհետև ինք այդպիսի ձիրքերով օժտեալ Առաջնորդ մը կը կարծէ որոնած և գտած լինիլ, ուրեմն անիրաւ չէ միևնոյն հանդամանքի արդեանց հաշիւը պահանջել իրմէ։

Առաջնորդ մը ամեն ինչ է գաւառաց մէջ կ'ըսուի. մենք ալ այս կարծիքն ունինք և այնպէս համոզուած ենք որ մեզի պէս դժբաղդ և անզօր ժողովրդեան մը մէջ՝ եթէ գտնուի Առաջնորդ մը որ փոքր ինչ եռանդ և փոյթ ունենայ՝ շատ և շատ մեծ գործեր կրնայ գործել. այս կէտը շատ պարզ է և երկար պատճառաբանութիւններով հաստատելու հարկ չկայ, քանի որ նոյն իսկ Աբէլեան ալ այսպէս կը կարծէ. բայց ան է կրկնել որ երբ Դեր. Մելքիսեդեկ քաղաքս եկաւ՝ ազգ. արկղը 4300 լիրա պարտք ունէր և այս պարտքն ալ նուազելու ենթակայ էր, ինչպէս որ կրնանք 1871, 1873 և 1876ի պաշտօնական հաշուէցոյցներով հաստատել. 1881ին 7300 լիրայի կը հասնի այն, և այսօր թէև տակաւին չէ հրատարակուած հաշուէցոյց մը որպէս զի ճշգրիտ կարենանք ըսել թէ ինչ է ազգ. պարտքը, բայց Հոլիս. վարժարանի շինութեան համար վոսս առնուած 700 լիրայն եթէ բարդենք անոր վրայ՝ կրնանք ըսել թէ 8000 լիրայի հասած է։ Արդ՝ Աբէլեան կամ Պօլսեցիք կ'ընդունին արդեօք որ ազգայնոց մնուկ մը տագնապալի վիճակի մէջ գտնուի ընդարձակ հասոյթներ ունենալով հանդերձ, և քսան օրինի ժամանակին հաշիւ չտրուի հասարակութեան՝ կամ տալով բոլոր գաղտաներու. կ'ուզեն որ իրենց դպրոցները ամուլ և ապարդիւն վիճակի մը վերածուին և այս վիճակին պատճառ եղող անձը մի քանի շինութիւններու համար փառաւորուի և գովաբանուի՝ եթէ ոչ իրենց մէջ, գէթ հեռաւոր ազգայնոց առջև. կրնանք որ ազգ. ժողովները, խորհուրդներ կամ դասութիւն չունենան կամ կազմուածեալ վիճակի մէջ գտնուին և այս առթիւ յայտնուած ամեն բողոքներ անընդունելի մնան. կրնանք վերջապէս որ Սահմանադրութեան անունը միայն լսուի, և ժողովուրդը հովուի իրը խաչանոց հօտ մը, որ ոչ կամք ունի և ոչ ալ ազատութիւն. կը համբերեն՞ որ այս ամեն զեղծումներու դէմ բողոքող ազգ. մամուլն իսկ բռնական միջոցներով լռութեան դատապարտուի, փոխանակ անոր քննադատութիւնները ի նկատ առնուելու. եթէ կ'ընդունին, կը ներեն այս ամենը, եթէ կը համբերեն, կը հաւանին այս ամենին՝ թող ուրեմն ընտրեն Տեղապահ, Պատրիարք, Կաթողիկոս ով որ կ'ուզեն, փոյթ չէ ով որ ալ ըլլայ։

Թող Աբշլոյը հակառակորդը դատուի. թող Աբէլեան—Մ-ոյ եթէ Պօլսեցիները թերեւ զմեզ ալ չարամիտ հրատարակէ. բայց միթէ այն ատեն Աբշլոյը կրնար ապրիլ այնպիսի տեղ մը, ուր արդէն սակաւաթիւ են ազգայինք և ընթերցասիրայ թիւն ալ բոլորովին սահմանափակ, մինչ եթէ մեր ամեն քննադատութիւնները հաճութեամբ չկարդացուէին, եթէ մեր ամեն տեսութիւնները մասնաւոր հետաքրքրութեամբ մը չվերառուէին, և մեր ամեն դրութիւնները ձեռքէ ձեռք չյափշտակուէին ժողովրդեան ամեն դասինեւակարդին մէջ՝ ընդհանրապէս կամ ի վաղուց լռած պիտի լինէինք կամ Աբշլոյը դադրած պիտի լինէր։

Ամենիսի պարագայներն են ասանք, զոր մարդ հեռուէն խակ իմաստասիրելով և նշմարելով կրնայ իրաց վիճակը ճշդիւ ըմբռնել, և ասոր համար հարկ չկայ ամեն գործերու և գաղտաներու ականատես գտնուիլ. ուստի զարմանալի է որ Աբէլեան ինչպէս կը ընայ անգիտանալ այս պարագայները. մոռնալ անցեալը, անտեսել ներկայն և հայ գրական ասպարէզին երկար ժամանակէ ի վեր բացակայ անձի մը պէս կարծիք յայտնել կարեւոր խնդրոյ մը վրայ։

Ուշադրութեան արժանի կէտ մը ևս սա է որ, եթէ մենք Դեր. Մելքիսեդեկի հակառակորդ լինէինք՝ ամենէն առաջ ընտրելի կը ներկայանինք զՆորին Սրբազնութիւնը՝ թէ Տեղապահութեան և թէ Պատրիարքութեան. քանզի մեր մէջ դիտուի ընդարձակ հասոյթներ ունենալով հանդերձ, և քսան օրինի ժամանակին հաշիւ չտրուի հասարակութեան՝ կամ տալով բոլոր գաղտաներու. կ'ուզեն որ իրենց դպրոցները ամուլ և ապարդիւն վիճակի մը վերածուին և այս վիճակին պատճառ եղող անձը մի քանի շինութիւններու համար փառաւորուի և գովաբանուի՝ եթէ ոչ իրենց մէջ, գէթ հեռաւոր ազգայնոց առջև. կը ներեն՞ որ ազգ. ժողովները, խորհուրդներ կամ դասութիւն չունենան կամ կազմուածեալ վիճակի մէջ գտնուին և այս առթիւ յայտնուած ամեն բողոքներ անընդունելի մնան. կը ներեն՞ վերջապէս որ Սահմանադրութեան անունը միայն լսուի, և ժողովուրդը հովուի իրը խաչանոց հօտ մը, որ ոչ կամք ունի և ոչ ալ ազատութիւն. կը համբերեն՞ որ այս ամեն զեղծումներու դէմ բողոքող ազգ. մամուլն իսկ բռնական միջոցներով լռութեան դատապարտուի, փոխանակ անոր քննադատութիւնները ի նկատ առնուելու. եթէ կ'ընդունին, կը ներեն այս ամենը, եթէ կը համբերեն, կը հաւանին այս ամենին՝ թող ուրեմն ընտրեն Տեղապահ, Պատրիարք, Կաթողիկոս ով որ կ'ուզեն, փոյթ չէ ով որ ալ ըլլայ։

Թող Աբշլոյ հակառակորդը դատուի. թող Աբէլեան—Մ-ոյ եթէ Պօլսեցիները թերեւ զմեզ ալ չարամիտ հրատարակէ. բայց միթէ այն ատեն Աբշլոյը կրնար ապրիլ այնպիսի տեղ մը, ուր արդէն սակաւաթիւ են ազգայինք և ընթերցասիրայ թիւն ալ բոլորովին սահմանափակ, մինչ եթէ մեր ամեն քննադատութիւնները հաճութեամբ չկարդացուէին, եթէ մեր ամեն տեսութիւնները մասնաւոր հետաքրքրութեամբ մը չվերառուէին, և մեր ամեն դրութիւնները ձեռքէ ձեռք չյափշտակուէին ժողովրդեան ամեն դասինեւակարդին մէջ՝ ընդհանրապէս կամ ի վաղուց լռած պիտի լինէինք կամ Աբշլոյը դադրած պիտի լինէր։

(1) Ցայտնի է որ Պատրիարք ընտրուելիք անձը՝ գոնէ ի հօրէ օսմանեան հպատակ ըլլալ պէտք է ըստ սահմանադրութեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԵՑԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

(Մասնաւոր թղթակցէն)

ԳԵՐՄԱՆԻԱ. Կիլիոմ կայսրը Սիկմարինկէն հասած է Հոհէնձօլէռն իշխանի հարսանեաց յիսնամեայ տարեդարձի հանդիսին ներկայ գտնուելու համար։ — Պիզմարք իշխանն ամսոյս 22ին հասած է ի Պերլին։ — Պերլինի աւետարանական բարձրագոյն խորհուրդն արգիլած է բողոքական հովիւներու՝ կրօնական ընդգեսասով ներկայ գտնուիլ անձնասպաններու թաղման արարողութեան։ Այս արգելքը դարձադրելի չէ, երբ բժիշկները վկայեն թէ անձնասպանն ուղեղային հիւանդութիւն ունեցած էր։ Արգիլուած չէ սակայն մեռելին վրայ դամբանական խօսիլ։ — Պերլինէն կը հաստատուին թէ գերմանացի նշանաւոր իրաւագէտ, քաղաքագէտ և փիլիսոփայ Ֆիւլ Ֆիշրման մեռաւ 82 տարեկան։ — Կ'ըսուի թէ Պոուն վիքի դուքսին թողած հարստութիւնը 375 միլիոն ֆրանք է։ — Պերլինի չինական նոր դեսպանն այդ քաղաքն հասած է։ Ամսոյս 24ին Կիլիոմ կայսրն երկար տեսակցութիւն մ'ունեցած է Պիզմարք իշխանին հետ։ — Հիւսիսային Արմանիոյ Կոէնիգ կը հաստատէ թէ Սքանդոր կը շարունակէ դրդռել Գաղղիացիներն ընդդէմ Գերմանացւոց։ Գերմանացի թերթն իր ըսածին իրը ապացոյց՝ Սքանդորի մէկ յօդուածը կ'արտատպէ, որ կը երատէ զԳաղղիացիս որպէս զի աշխարհիս առաջին կողմանց վրայ Պիզմարք իշխանին իրենց ցուցած բարեկամութենէն զգոյշ կենան։

ԱՆԳԼԻԱ. Պ. Զայլէրս առնախօսութիւն մ'բրած է իր ընտրողաց առջև, ուր ըսած է թէ՝ այս տարի կառավարութիւնն յոյս ունէր Եգիպտոսի գանձային գործերը կարգադրելու, Գաղղիոյ և այլ տէրութեանց համաձայնութեամբ, բայց այս համաձայնութիւնն ուրուրեցաւ։ Գաղղիոյ ազգային ժողովոց կողմանէ. ատենաբանը կըսէ թէ քոնֆէրանսը չյաջողելուն միակ պատճառն այն է։ — Լոնտոնէն կը հեռագրեն Բարիզի Մոդէն լրագրոյ թէ մեծամեծ խռովութիւններ տեղի ունեցեր են Բորթսմաուսի մէջ. ընտրական բարենորոգմանց ի նպաստ տեղի ունեցած ազատականաց դումարման մ'առթիւ։ Դումարման տեղին կը պաշարուի ամբոխին կողմանէ, պատուհանք կը խորտակին նետուած քարերով և երբ դումարումը կը ցրուի բարլամէնթի անդամ Պ. Թոմաս Տիլքոքն դանակի հարուած մը կը ստանայ, ինչպէս նաև շատեր կը վիրաւորուին։ Ոստիկանութիւնը չկրցաւ զսպել խռովարարները, որք բազմաթիւ առներու մէջ մտնելով անկարգութիւններ գործեցին։ — Տեղէն նշանակը ցանկ թէ, կառավարութեան առաջարկութիւններ եղեր են Ա-

բևմեան Ամերիկէի Անգլիական դաղթականութեանց հետ հեռագրական հաղորդակցութիւններ հաստատելու։ Թոյլ քանի մը մանրամասնութիւններ կուտայ այս դծին դետեղման վրայ։ Ընդծովեայ այս դիծը դետեղելու յանձնարարուած Սիլվերթաուն նաւը Վուլվիչէն մեկնած է մէջն ունենալով 1200 մղոն երկայնութեամբ թել։ Նաւը նախ պիտի երթայ Թենէրիֆ զոր պիտի միացունէ Լանզերոթ կղզիին հետ։ Այս երկու կէտերուն մէջի անջրպետն է 250 մղոն։—Պէրլինէն կը դրեն թէ, նոյն քաղքի անգլիական հանդուցեալ դեսպան լորտ Ամիթիլ յիշատակագրութիւններ թողած է, որք խիստ կարևոր ծանօթութիւններ կը պարունակեն Պիզմարք իշխանին, ինչպէս նաև դերմանացի ուրիշ բարձրաստիճան պաշտօնեից վրայ

ԱՒՍՏՐԻԱ. Ֆրէմենպլաթ լրագիրը կը ծանուցանէ թէ Շարթի դուքսը Վիէննա հասած է։—Կայսերական դահաժառանգ Ռուտոլֆ իշխանն ևս Վիէննա հասէր է Ալմանիայէն գալով։—Նոյնպէս այդ քաղաքն հասէր է Ճարոնի պատերազմական դործոց նախարար Պ. Բիամա, որուն կընկերակցին թղթատարութեան և երկաթուղեաց նախարարն ու Նուզու և Բավաքամի զօրապետները։ Նախարարին նպատակն է աւստրիական զօրաբանակին կազմակերպութիւնն ուսումնասիրել։

ՋՈՒԻՑԷՐԻԱ. Նոյեմբեր 23ին Բարիզի մէջ դումարելիք դրամային ժողովոյ մէջ ներկայիչ նշանակուած են հելվէտական կառավարութեան կողմանէ Պ. Լարտի, որ դեսպան է ի Բարիզ և Պ. Պիշօֆ։—Ժանտարմերիան երևան ելեր է Սիլէնի մէջ, որ Պասէ նահանգին սահմանակից գիւղ մ'է։ Անցեալ շաբաթ մէջ 37 հոգի բռնուեր են որոյմէ 2ը մեռեր են։—Մոնարի մէջ հրատարակեալ ազատական լրագրոյ մը խմբագիրն սպանուեցաւ կաթոլիկ ընկերութեան մը նախագահին կողմանէ, որուն ընթացքը քննադատած էր սպանեալ խմբագիրը։

ՇՈՒԷՑ. Սթոքհոլմէն կը ծանուցանեն թէ Օպան—Կիլիոմ Սթաէլ, նախկին նախարար, մեռեր է 82 տարեկան։ Օ. Կ. Սթաէլ, Ժան Թագաւորին նախարարութեան ողջ մնացող անդամոց վերջինն էր։

ՍՊԱՆԻԱ. Մադրիտի պաշտօնական ակմբոյ մէջ կը հերքուի Բիւզայի համար ըլլալիք փոխառութիւնը։ Կառավարութիւնը կը յուսայ որ Միացեալ—Նահանգաց հետ եղած դաշնագրութիւնն և ուրիշ միջոցներ կարող պիտի ըլլան Բիւզայի կացութիւն բարւոքելու։—Կառավարութիւնն հրաման ըրաւ չթխել քոլերայէ զերծ երկիրներէ հասած թղթածրարները։—Հավանայէն հեռագիր մը լուր կուտայ թէ Բիւզայի կառավարիչն հրաժարեր է։—Մադրիտէն հասած հեռագրի մը նայելով Մալէօ և Բասթիլլօ, նախկին ապստամբապետք, որք Պալէառ կղզիներուն մէջ բանտարկեալ էին, փախեր են։ Կըկարծուի թէ Ալճէրի դացած են։

ՌՈՒՍԱՍՏԱՆ. Վարշաւիոյ լրագիրը ոստիկանութեան մէկ հրամանագիրը կը հրատարակեն, որ 41 օտարականաց արտաքսումը կը հրամայէ։ Արտաքսեալներուն մէջ կը դտնուին 17 դերմանացի և 10 աւստրիացի։—Նիժնի Նովկերօտի դատարանն իր վճիռն արձակած է, Քունավինոյի Հրէից վրայ բռնաբարութիւն գործող 72 անհատից դէմ։ Ասոնցմէ 11 հոգի թիւապարտութեան, 50 հոգի աւելի թեթև պատժոց դատապարտուեցան, մնացեալ 11 հոգին անպարտ արձակուեցան։—Պէրլինէն Ռիւթէրի գործակալութեան զրկուած հեռագրոյ մը նայելով (ինչպէս մեր Օրուան Լրոյ մէջ յիշատակած ենք) Զարին կենաց դէմ նոր դաւադրութիւն մ'երևան ելեր է Բէդերպուրկի մէջ։ Բազմաթիւ ձերբակալութիւններ եղան և ոստիկանութիւնք գաղտնի տպարան մը գտաւ։

ԱՄԵՐԻԿԱ. Նիու Եորքէն կը հեռագրեն թէ, նոյն նահանգի Քարթաժ քաղաքին մէջ ահագին հրդեհ մը ծագելով 160 բնակարան այրեր են։ Կորուստը մէկ միլիոն տոլլարէն աւելի կը հաշուուի։—«Նիու Եորք Թայմզ» լրագիրը կը ծանուցանէ թէ Հանրապետութեան նախագահ Պ. Արթիւր ամուսնութիւն կնքած է Արտաքին գործոց նախարարին դստեր հետ։ Ամուսնութիւնը տեղի պիտի ունենայ առաջիկայ յունվար ամսոյ մէջ։—Միլորեականի համար Վաշինկթընէ դուսմարեալ ժողովը իր որոշմանց տեղեկագրութիւններն բրած է։

ԻՏԱԼԻԱ. Հռոմէն կը գրեն Սթանտարտ լրագրոյ թէ, Պրուսէլէն Վատիկան հասած վերջին լրոյ համեմատ, Պելճիքական նոր ընտրութիւնք արդելք մը չպիտի ըլլան դիւանագիտական յարաբերութեանց վերսկսման։ Բայց Վատիկան, Պելճիոյ կառավարութեան հետ համաձայն, կը ճանչէ որ մենսինեօռ Ռոմէլլի կը պարտաւորի սպասել, մինչև որ կացութիւնն աւելի բարւոքի, Պրուսէլ պատուիրակութեան երթալու համար։

ՃԱՊՈՆ. Ճարոնի լրագիրք Միքատո կայսեր մէկ հրովարտակը կը հրատարակեն, որ կը [illegible] Պուտայի և Շինթոյի կրօնքները դադրած են Պետական կրօնք ճանչուելէ և թէ պետութիւնք չպիտի թոշակ տայ այլ ևս այդ կրօնից վարչութեանց։ Ամեն ճարոնցի ազատ պիտի ըլլայ այսուհետև իր ուզած կրօնքին հետևելու։

ՖՐԱՆՍԱ. Ներկայն զբաղած է կչկին անդամ յանցանօք դատապարտեալներուն նկատմամբ օրինաց ծրագրով։—Մեծամասնութեամբ ընդունած է Թոնքինի և Մատակասկարի բանակաց զինուորական միատիսն տալու խնդիրը։—Երեսփոխանաց ժողովը օրինաց ծրագիր մը քննարկած է, գործաւորներու պատահած արկածներու առնն գործարանատերոց պատասխանատուութեան նկատմամբ։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐԸ

Սոֆիա 27 հոկտ.—Ալէքսանդր իշխանն այսօր անձամբ բացաւ ազգային ժողովոյ նիստը։ Իշխանն իր ճառախօսութեան մէջ հաստատեց այն հանդարտութիւնը զոր երկիրը կը վայելէ և հաստատ բարեսիրութիւնը զոր տէրութիւնք ունին Պուլկարիոյ նկատմամբ։ Այս նիստին մէջ դանձուց վերաբերեալ զանազան օրինաց ծրագիրներու ներկայացուիլը ծանոյց։ Ժողովոյ ուշադրութիւնն հրաւիրեց երկաթուղեաց միացման խնդրոյն վրայ։ Իշխանն իր ճառախօսութիւնը վերջացուց յոյս յայտնելով թէ մօտերս պիտի կարդադրուի Սերպիոյ հետ եղած վէճը։

—

Պրուսել 27 հոկտ.—Նոր (կաթոլիկ) նախարարութիւնը կազմուեցաւ Պ. Պիրնակրի նախագահութեամբ։

Քարաման-Շիմէյ իշխանը, որ նախկին կառավարիչն էր Հէնոյի, արտաքին գործոց նախարար կոչուեցաւ։

—

Գահիրէ 26 հոկտ.—Լորտ Նորթբրուք այսօր մեկնեցաւ ի Մարսիլիա։ Երբ եգիպտական զօրաբանակն 3000 հոգիի սատարածուի, ինչպէս որ որոշուեցաւ, սոյն զօրաբանակին մէջ դրաւնուող անգլիական ոստայք՝ անգլիական զօրուզուրեան պիտի հետևին ի Սուտան, ի բաց առեալ տասն ընտրեալ, որք հրաժարական տուին։

—

Պերլին 26 հոկտ.—Փիլիպէրլանի դուքսն յայտարարութիւն մը հրատարակեց, որով իր Պրունսվիքի դքսութեան յաջորդութիւնը կը խնդրէ։ Ամանիոյ կայսրն իսկոյն մերժեց դուքսին այս յայտարարութիւնը։

—

Բէթլէրպուրկ 27 հոկտ.—Այս տեղ Նիհիլիսթներու մէկ դաւադրութիւնն երևան ելաւ, որով Զարն սպաննել կուզէին։

—

Հռոմ 28 հոկտ.—Այսօր քոլէրայէն մեռան ի Նաբոլի 7, յայլեայլ կողմունս 17, ընդամենը 24 հոգի։

—

Օրան 28 հոկտ.—Այսօր Օրանի մէջ քոլէրայէն մեռաւ 1 հոգի։

Քանի մը օրուան մէջ ի Պոլիս, յԱլէքսանդրիա և ի Մարսիլիա մեծ սընանկութիւններ տեղի ունեցեր են, որոց պատճառն է կլսուի արմատաց գիներուն ցածութիւնը։ Պոլսոյ սնանկութեան բացն է 6,000, Ալէքսանդրիոյ՝ 300,000 ոսկի։ Մարսիլիայինը տակաւին անյայտ է։

—

Ծովային վաճառականութեան աւելի մեծ զարդացումի տալու մտօք, կայսերական կառավարութիւնն երկու յանձնաժողով կարդած է, որոց մին պաշտօն պիտի ունենայ նաւարաններ հիմնելու, ուր պիտի շինուին նոր շոգենաւեր։ Իսկ միւս յանձնաժողովոյ պաշտօնը պիտի ըլլայ նաւային քաղաքային վարժարանին կազմակերպութիւնն ու բացումը դիւրացունել, որուն հիմնարկութիւնն արտօնուած է կայսերական իրաւունքով։

—

Էքսբրէս կը գրէ թէ, արտաքին գործոց նախարարի խորհրդական Վսեմ. Յ. Տատեան Պէյի դեսպան և կայսերական Հարէմի Ճարգման օրիորդ Եւգինէ Տատեան ամուսնացեր է նախարարական [illegible] ազգեներին տարբեր հարաբերական էֆէնտիի հետ։

—

Թարէթ կիմանայ թէ Սէլանիկի հանրային կրթութեան վերատեսուչ Միւմթազ պէյ դատ բացած է Թերճման հարիֆ լրագրոյ դէմ, իրեն ձին նկատմամբ անուանարկիչ յօդուածներ հրատարակելուն համար։

—

Պոլսոյ լրագիրք կը ծանուցանեն թէ Երուսաղէմի վանուց պարարքին բարձման խնդիրը լուծուելու վրայ է, արդարութեան գործոց նախարարին Ջանիք, և թէ Եսայի Ս. Պատրիարք մօտերս պիտի մեկնի Երուսաղէմ։

—

Ալէքսանդրիոյ օձնէ յոյն լրագիրը կը պատմէ թէ, Ալէքսանդրիոյ, Անտիոքայ և Երուսաղէմի օրթոտոքս պատրիարքութիւնք պատրաստուած են բողոքագիր մը մատուցանել բարձրագոյն Դրան և Պէրլինի դաշնադրութիւնն ստորագրող տէրութեանց, ընդդէմ Ռումանիոյ երեսփոխանական ժողովոյ, որ Ռումանիոյ մէջ այդ պատրիարքութեանց վերաբերեալ խել մը կալուածներ ի հաշիւ արքունեաց ծախած է։

Թրանսիլվանիոյ Քլաղենպուրկ քաղաքին մէջ քոլէրա ծագելով մարդ մը մեռեր է։

—Հռոմէն կը դրեն թէ ա'Ալանծօ կարդինալը մեռեր է։

—Սպանիոյ Պատաեոզ դաւառի կուսակալն ուզի տարի բանտարգելութեան դատապարտուեր է անցեալ 1882 օգոստոսի ապստամբութեան մասնակից դանուելն հաստատուելով։

—Հռչակաւոր ռճրագէտ (քրիմինալիսթ) Ֆոսթէն Հէլի և փոխ նախագահ պետական ժողովոյն Գաղղիոյ, և անդամ բարոյական գիտութեանց Ակադեմիոյ մեռեր է։

—Անգլիական լրագիրք կը ծանուցանեն թէ Պ. Կլատսթօն հրաւիրած է Բէլ Մէլ Կազէթ լրագրոյ դրատէս հերքել այն լուրը՝ զոր տուած էր թէ նախարարապետը մասնաւոր ճաշի մը առեն յայտնած ըլլայ որ Անգլիա տկար է և սակայն պատերազմիլ կուզէ։ Այս միջադէպը պատմած էինք մեր նախորդ թուոյ քաղաքական մասին մէջ։

ԳՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ԾԱԴՄԱՆ ՎՐԱՑ

Այս վերնագրով նոր և հմտալից աշխատասիրութիւն մը հրատարակուելու վրայ է Փարիզի մէջ, որուն հեղինակն է Գաղղիոյ Գիտութեանց Կաճառի անդամներէն Հէրվէ Ֆէյ։

Գիտնական հեղինակն յակնարկած է սոյն դրքին մէջ ուշադրութեան առնուող բոլոր աշխարհածնութիւնները (գեոմոֆոն), Ատատաւծաշունչ մատեանին մէջ գրուած աշխարհածնութենէն մինչև Լափլասի աշխարհածնութիւնը, յիշատակելով միանդամայն Նախնի փիլիսոփայից, զրօրինակ Պլատոնի և Լուկրէսի, և արդի դիանոց, զրօրինակ Տէքարդի, Նէվտոնի և Լափլասի կարծիքները։ Հէրվէ Ֆէյ ապա իր յատուկ դրութիւնը կ'առաջադրէ և կը վերջացնէ մեր աշխարհին և երկրագունդին վախճանին վրայ տեսութիւն մ'ընելով։

ԲԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱՑ

«Կրկնակի կերպով նշանակեցի վեշտասանսերորդ դարու մէջ եղած աշխարհածնական դաղափարները։ Նախնեաց համար աշխարհի և տիեզերաց վրայ ունեցած ծանօթութիւնք իրարու հետ կըշփոթին։ Տիեզերք ստեղծուած է մարդուս համար։ Երկրագունդէս դուրս կենդանի էակ չկայ, այլ աստեղական էութիւններ, անաղաւաղելի և ոչ—ենթակայ ծննդեան ու մահու։ Վեշտասաներորդ դարէն սկսեալ բոլորովին նոր դաղափար մը կը ծագի, այսինքն թէ՝ Տիեզերք կը բաղկանայ անհամար աշխարհներէ, որոց իւրաքանչիւրը, մեր աշխարհին նման, ունի Արեգակ մ'իրը կեդրոն, թէ՝ այս ընդարձակ ամբողջութիւնն անկարելի է որ ոչինչի համար ստեղծուած ըլլայ, թէ՝ Երկիրս, ամեն տեսակէտէ աստիճան, տարբերի է որ ինք միայն մենաշնորհեալ ըլլայ կենդանի և իմացական էակներ ունենալու։ Այս դաղափարը Նէվտոնի դրչին տակ ծնաւ։ Աշխարհները բնակեալ և կեանքը տարածեալ Տիեզերաց մէջ՝ այլազան ձևերով,—ինչ ահագին և անսահման ասպարէզ՝ երևակայութեան համար։

Երևակայութեան համար այդպէս է, բայց գիտութեան համար ոչ։ Իրականութեան կէտին վրայ գիտութիւնն համր է և համր պիտի մնայ։ Նոյն իսկ մեր աշխարհին մէջ, մանրակները խիստ հեռացեալ են և մեր ամենէ հզօր հեռադիտակները չեն կարող որոշել տալ մեզի կենդանի էակներ կամ նոյն իսկ ատոնց գոյութեան անուղղակի հետքեր։ Իսկ այն մոլորակները, զորս այս միլիոնաւոր արևներուն կը վերագրեն, ոչ ոք կը տեսնէ և ոչ ոք պիտի տեսնէ։ Ահաւասիկ ինչ որ ատաղագէտ մը կրնայ գրել թէ այս նիւթիս վրայ ըսել։ Դիտեցէք երկինքը և ըսէք դուք ձեզի թէ, դիտակին ցուցած այս բիւրաւոր աստղերէն և ոչ մին բնակեալ է՝ քանի որ բոլորն ալ ջեռուցեալ կամ շոգարձակ վիճակի մը մէջ կը դտնուին, և ոչ մին բնակեալ չպիտի ըլլայ՝ քանի որ իրենց շիլման ժամանակ, այսինքն այն ժամանակ երբ կենդանի էակ մը պիտի կրնայ ոտ կոխել անոնց ցրտացեալ և հաստատեալ կեղեւին վրայ՝ իրենց համար, փոխադարձ անհուն հեռաւորութեան պատճառաւ, մերձակայ արև մը չպիտի ըլլայ ջերմութիւն և լոյս տուող։ Տիեզերքիս մէջ մէկ աստղ միայն կայ և որ կը վերաբերի մեր աշխարհին, մեր արբանեակն է այն, Լուսինը, որուն վրայ կենաց հետքեր դտնելու բաղդը պիտի ունենայ։ Եւ սակայն տիեզերական կենաց կուսակիցք դժբաղդ են, վասն զի Լուսինն անտպատ մ'է։

ՊԱՅՄԱՆՔ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿԵՆԱՑ

Գիտութեան տեսակէտով, բնակեալ աշխարհներու բազմութեան այս խնդիրն ուրիշ շատ աւելի դիւրաւ մատչելի կամ ըմբռնելի խնդրոյ մը կը ստորադրի, այն է Տիեզերաց մէջ կենաց պայմաններու խնդիրը։

Նախ կը հանդիպինք ռամկական առարկութեան մը։ Կըսատամանուի որ աշխարհէ մ'ուրիշ աշխարհ անջրպետք կամ միջավայրք բոլորովին կը զանազանին իրարմէ։ Բայց երբ խնդիրը կենաց վրայ է, բանաւոր չէ, կ'ըսուի, զայն դատել մեր երկրագունդին վրայ, մեր աչաց առջև անցնող իրերով։ Մեր դատողութիւնն այնքան տկար կ'ելլայ, կ'ըսեն, որքան տկար է ամենէն գետ, լիճ և ծով չտեսնող մարդու մ'ասնց վրայ բրած դատողութիւնը։ Այդ մարդը պիտի պնդէ թէ կեանքը կարելի չէ հնչելի մթնոլորտէ մը դուրս դոյութիւն ունենալ, ամեն էակ որ ջուրը կը թափանցէ՝ կը հեղձանի։ Նոյնպէս, կ'ըսուի, կեանքն իր սահմանաւոր դիւրադարձութեամբ, հեշտիւ կ'իրացնէ զանազան պայմաններ ու պարագաներ։ Ուստի ներելի չէ ընել թէ, կ'ըսեն, կեանքը բացակայ է Տիեզերքին հեռաւոր վերնադաւառաց մէջ, միայն սա պատճառաւ թէ՝ անջրպետք կամ պայմանք տարբեր են մերիններէն։

Եթէ այդպէս ըլլար, եթէ անկիզելի սաղամանդրներ կամ հրոյ ոգիք տարբեր ջեռուցեալ անջրպետներու մէջ, եթէ մոլորակներու անջրպետներուն մէջ թռչող վիշապաձիւծ քաղեր կամ քիմառներ (դեռ) կարենային սքանիչ կամքով միայն, ինչպէս կ'ըսէին միջին դարու մէջ, այնտեղ ուրիշ բան չունէինք ընել եթէ ոչ դոցել այս դլուխը։

Բայց կենսաբանք այդ կարծիքէն չեն։ Նոքա կը յուսան կենաց երևոյթները բացատրել Մեքենականութեան, Ֆիզիքականութեան և Քիմիականութեան հաստատակ օրէնքներով, և ինչպէս որ այս օրէնքներն Երկրի յատուկ չեն, ինչպէս որ անոնք ամբողջ Տիեզերքին համար միևնոյնն են, ուստի հարկ է որ նմանապէս ընդհանուր պայմաններ ալ կենան որոցմով երևակայուի թէ կենդանի էակներ գոյութիւն ունին, աւելի բարձրագոյն կարգի մը վերաբերեալ։

Զանազան կարգի պայմաններ կան, այսինքն աստղագիտական, մեքենական, երկրաբանական, ֆիզիքական և քիմիական։

Մի՛ մոռնալի պիտի ըլլար ենթադրել թէ Տիեզերքիս մէջ միմիայն մէկ գունդ բնակեալ է, բայց նմանապէս անկարելի պիտի ըլլար բոլորովին պնդել թէ այդ աշխարհները բնակեալ են կամ պարտին բնակեալ ըլլալ։

ՎԱԽՃԱՆ ՆԵՐԿՈՅ ԱՇԽԱՐՀԻՍ

Ահաւասիկ բոլորովին նոր դաղափար մ'ալ։ Արեգակնային դրութիւնը չէ որ պիտի քակուի, պիտի կազմալուծուի կամ ամբողջովին պիտի ընկղմանի կեդրոնական կայտին մէջ։ Լափլաս ցոյց տուաւ թէ այս հիանալի մեքենականութիւնն յաւիտենապէս տևելու համար եղած է։

Մեքենական մնայունութեան բոլոր պայմանները միացած կը դտնուին անդ, և չմոռնանք յիշելու թէ այդ պայմանք գոյութիւն ունին սկզբնական ատոմաստեղց յատուկ առանձնական հանդամանաց պատճառաւ։ Բայց աշխարհս, տևելու համար զօրութիւն կամ կորով չըսպառէր, մինչդեռ արեգակը, փայլելու համար ահագին կերպով կը սպառէ կորով ու զօրութիւն։ և ինչպէս որ իր պաշարը սահմանեալ է և չըկրնար նորոգել, կը պարտ-

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

տինք մոռարերել, թէն ոչ ապահովապէս մերձ, այլ իրր անխորշելի՝ արևուն մահը։ Տակաւին միլիոնաւոր տարիներ ևս հաւատար փայլով մը շողալէ եւ պիտի ակարանայ և պիտի չիջանի իւրն սպառած ճրագի մը պէս։ Զայս կաղդարարեն մեզ արդէն բաղմաթիւ երկնային երևոյթներ, ասանք այն ատաղերն են որոց լոյսը կը դողդողէ կամ կը ծածանի, որք պարբերաբար կը շէջանին, գէթ մերկ աչաց համար, զորօրինակ Կէտ համաստեղութեան Օմէրոն ատաղը, և որք վերջնական կերպով կ'անհետանան։

Մանաւանդ այս վախճանական տեսիլը նկատելով է որ լաւ պիտի ըմբռնուի Արեգակին մեր աչխարհին մէջ ունեցած տհաղին դերը իր հզօր ձգողականութեան մեքենական ազդեցութիւններէն դուրս։ Արեգակը շարունակաբար մաս մը կը կորսնցունէ իր ջերմութենէն, իր կոյսը կը խատնայ և կը կծկի, և հարկ է որ իր ծորականութիւնը նուազանայ։ Պիտի գայ վայրկեան մը ուր շը՝ը՝ջայածութիւնը, որ լուսագունդը կը նուազցնէ և անոր ճառագայթումը կը կնանաւորէ՝ գրեթէ ամբողջ տհաղին կոյսն անդմանակից ընելով, պիտի նեղուի և պիտի սկսի յամրընթաց դառնալ։ Ցոյնժամ ջերմութեան և լոյսին ճառագայթումը պիտի նուազի, բուսական և կենդանական կեանքը հեղհեղ պիտի ձգտի դէպի երկրային հասարակած։ Երբ այդ շը՝ջայածութիւնը դադարի փայլուն լուսագունդին տեղ պիտի մնայ անթափանցիկ և մթին կեղև մը՝ որ անմիջապէս պիտի վերջացնէ ամեն լուսաւոր ճառագայթում։

Այնուհետև կարելի պիտի ըլլայ արեգական վրայ քայլել, ինչպէս կարելի է քայլել քանի մ'օրէն, տակաւին ի ներքուստ ջերմ լավաներու վրայ, որք մեր հրաբուխներէն կը ժայթքին։ Ա՛է այնուհետև մեր երկրագունդն ստեղական տկար ճառագայթներ միայն ունենալով՝ պիտի դառնայ դատարարուի ցրտութեան և անջրպետին անդնդային խաւարայ։ Մթնոլորտին շարունակաբար շարժումները կատարելապէս պիտի դադարին։ Զուրին օդոթերական (աերօ—թերմիւրիզ) շրջանը որ դամեն ինչ կը կենդանացնէ՝ պիտի անհետանայ, վերջին տմպակոյտերն իրենց վերջին անձրևները պիտի տարածեն երկրիս վրայ, առուներն ու գետերը պիտի դադրին ծով տանելէ ջուրերը՝ զորս արեգակնային ճառագայթումն իր դադարումով պիտի կատեցունէ։ Ծովն, ինքն իսկ ամբողջովին սառելով չպիտի հնազանդի տեղատուութեան և մակընթացութեան օրինաց։ Երկրագունդն ուրիշ յատուկ լոյս չպիտի ունենայ, եթէ ոչ լեռնոյ տատզերաւնք, որք պիտի շարունակեն մթնոլորտին մէջ թափանցել և հոն բոցավառելու։

Բայց գալով համայն դրութեան, մթին և ցրտացեալ մոլորակները պիտի սլսին շիջեալ արեգակին բոլորտիքը շրջան առնալ։ Այս շարժումներէ զատ, որք նախնական ատաղախմբին պատուկային յորձանայ վերջին ներկայացուցիչները պիտի ըլլան, և զոր այսինքն այդ նախնական ատաղախումբը ոչինչ կարող պիտի ըլլայ ջնջելու, — այդ շարժումներէն դուրս կը սեսնք, մեր աչխարհը զրեց բոլոր զորութիւնք պիտի սպառէ զոր Աստուծոյ ձեռքը նախնի քաոսին մէջ կուտած էր։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Աս. «Թռանսադլանթիք» ատաղհովական ընկերութիւն

. . . խրատիր։

Վերոյիշեալ ատաղհովական ընկերութեան, իր պարտականաչութեան մասին ունեցած ուղղութեամբն առխս ազդած երախտագիտական զգացումս քաղցր և անհրաժեշտ պարտաւորութիւն մը կը դնէ իմ վրայ ի լուր աշխարհի յայտնել իմ ջերմ շնորհակալութիւններս, այն նկատմամբ թէ՝ վերջին անգամ Հայոց թաղին մէջ ծագած մեծ հրդեհէն մոխիր դարձած բնակարանիս ատաղհովագին անմիջապէս և ամբողջապէս փութաց վճարել առանց որևէ ապարկութեան։ Արդ՝ այն ընկերութեան ինչպէս ուրիշ ատաղհովագրելք նոյնպէս նաև ես կը փութամ քաղքիս հասարակութեան ուշադրութիւնն ու կատարեալ վստահութիւնն հրաւիրել նորա վրայ։

Ալեքսան Քըրքիսեան

—

Շինութիւնն աւարտելու մօտ եղող կայսերական վարժարանը քիչ տանի մէջ պիտի բացուի իրր երկրագործական և վաճառականական վարժարան, և որուն իրր ստորագրելիք պիտի յատկացուի ադարակ մը (Նիւմանեք չիֆթլիկի)։ Այս իմաստիւք հաղորդ մը դրկուած է ի Պոլիս և հրամանին կը սպասուի։

—

Ոստիկանութեան գործակալներուն թէ ոստիկանական և թէ քաղաքային պարտաւորութեանց մէջ սխալներ չգործելու և իրենց պաշտօնին սահմանները լաւ ճանչելու համար, Վսեմ. քնդհ. Կառավարիչը պատուիրած է տեղւոյս ընդհանուր Դատախազին այդ հոգովն զբաղիլ, այսինքն ուսուցանել ոստիկանաց թէ ինչ են իրենց պարտաւորութիւններն և թէ ինչ կերպով վարուիլ կը պարտին իրենց պաշտօնին մէջ։ Ուստի կ'իմանանք թէ ընդհանուր դատախազ Թէվֆիկ պէյ, որոյ այս մասին ունեցած կարողութիւնն ապացուցեալ է, քանի մ'օրէն պիտի սկսի այս գործին, դասատուութեան եղանակաւ ոստիկանաց պարտաւորութիւններուն սահմանը գծելու։ Կը յուսանք որ արուելիք դասախօսութիւնները համառօտիւ մեր քնթերցողաց կրնանք հաղորդել։

—

Դաւառիս Տատեորդական տրոց վերատեսուչ Զիւհտի պէյ, որ երկու ամիս ի վեր Մէնթէշէի նահանգը կը գտնուէր յիշեալ տրոց վերաբերեալ գործերու քննութեան համար, հինգշաբթի օր քաղաքս վերադարձաւ։

—

Երկաթուղեայ և թրամվէյի վարչութիւններու իրր դրամ ազապած տոմսակները, որոյ մասին անցեալ թուով ծանուցած էինք, Կառավարչին հրամանին վրայ շրջաբերութենէ քաշուած են.

—

Տեղւոյս պաշտօնական թերթին դրածին նայելով, սեպտեմբերի 14ն մինչև հոկտեմբեր 13, այսինքն 45 օրուան մէջ տեղւոյս Ամիրատարկու Ատեանին ներկայացուած են 154 դատի վերաբերեալ գրութիւններ։ Ասանցմէ 15 դատի վերաբերեալ գրութիւնք օրինական պատճառներով ետ տրուած են, իսկ միւս 139 գրութիւնք քննուելով՝ հաղորդները դրի առնուած են, և այս վայրկենիս յիշեալ Ատեանին մէջ որևէ առկախ մնացած գործ չկայ։

—

Զէյմէկն կ'իմացնեն թէ, հինգշաբթի գիշեր ահռելի ոլոտումներով երկրաշարժի ցնցում մը պատահեր է։

—

Բլաղոմէնի քարանթինայի վարչութիւնը կ'իմացնէ թէ, Բուլգարիոն նաւը մաքրանոց հասած է 844 Մէջիտիէի ուխտաւորներով։ Ասոնցմէ 12 հոգի հիւանդ են, բայց քննուելով ստուգուեր է որ սովորական հիւանդութիւններ են և ոչ տարափոխիկ ախտ։

—

Հոկտեմբերի 10ին Ուրլայի մէջ սաստիկ դեռնաշարժ մը պատահեր է։

—

Ցաւնոց թատերական դուսանները խումբը տասն օրէ ի վեր ներկայացումներ կուտայ Քամանոնա և Աբօլլօ թատրոնաց մէջ։ Հինգշաբթի դիշեր երկու թատրոնաց մէջ ևս Շէքսպիրի Համլէթը ներկայացուցին։ Խումբին պարագլուխ Պ. Լէքայա Աբօլլոի մէջ կը գտնուէր, ուր Համլէթի դերը կատարեց անդլիերէն լեզուով, միւս դերերն յունարէն լեզուով կը կատարուէին։ Թատրոնն ըստ բաւականի հանդիսատես կը պարունակէր։ Աւելորդ է ըսել թէ Պ. Լէքայա յաջողութեամբ կատարեց իր դերը։

Այսօրուան Պոլսէն հասած լրագիրք կ'իմացնեն թէ, Նիւմանից պաշտօնատան վերաքննութեան ատենի նախագահ Յովհաննէս Զամիչ էֆ. մեռեր է 63 տարեկան հասակի։ Զամիչ էֆ. հռոմէական ազգայնոց և պետական պաշտօնէից նշանաւորներէն էր։

Վերջին Հոկտեմբեր 26ին լրացող շաբթուն մէջ Իզմիրէն ի Քաստապա երկաթուղւոյ գործողութեանց հասոյթն է անգ. ոսկի 3500—12—8 ի կշիռ 4186—2—0 անցեալ տարուան համապատասխանող շաբթուն։

Նոյն թուականին լրացող 17 շաբաթուց միջին հաշիւն է անգ. ոսկի 2869—10—2 ի կշիռ 3094—10—9 անցեալ 1883 տարուան համապատասխանող շաբաթաշրջանին։

Գրեհնեռ Լորը-Բեռ

Իզմիր, 30 Հոկտեմբեր 1884

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԳԱՐԻ։ — Ծախուեցաւ 20,000 քիլ առաջին տեսակը 12—12 3)8, երկրորդը 11—11 3)4 ղրուշ քիլն։ Ի պահեստի կայ 60,000 քիլ։

ԱՖԻՕՆ։ — Ծախուեցաւ 11 կողով Պոլատլը 128 ղրուշ չէքին, 62 ատէթ և Գարահիսար 105—107, 51 այլեայլ թալէքուալէ 99 1)2—102։ Ի պահեստի կայ 1250 կողով։

ԲԱԼԱՄՈՒՏ։ — Ծախուեցաւ Անգլիայ առաջին ապրանք 6000 կենդինար 102—116 ղրուշ կենդինարը 9000 կենդինար ալ նոր ապրանք 95—132։ Երկրորդ տեսակ ապրանքին գինը 85—90 ղրուշ։ Բրֆիւզ 58—65 ղրուշ է կենդինարը։ Ի պահեստի կայ 35,000 կենդինար։

ԲԱԿԼԱՑ։ — Ծախուեցաւ 220,000 օխայ 31 1)2—32 փարա օխան, ի պահեստի ապրանք կայ 2,500,000։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ։—Ծախուեցաւ 1000 քիլ, առաջին տեսակը 41—42 երկրորդը 32—35 փարա օխան։

ԲԱՄՊԱԿ։ — Ծախուեցաւ 125 հակ 312 1/2—505 ղրուշ կենդինարը։ Ի ի պահեստի 300 հակ ապրանք կայ։

ՃԷՅԷՐԻ։ — Ծախուեցաւ 22,000 օխայ 24—25 փարա օխան։

ԹՈՒՋ։ — Այս շաբթու 1200 բեռ ապրանք եկաւ ծախուեցաւ 6200 կենդինար, Այտընի տեսակը 50—65 Էրսէյլի 45—60, Էլէմէ 85—130, բրֆիւզ 33—34 ղրուշ կենդինարը։

ՁԱՄԻՉ ՍՈՒԼԹԱՆԻՆԱ։ — Ծախուեցաւ 28,000 կենդինար 1—4 ղուշ օխան ըստ տեսակին, ի պահեստի 45,000 կենդինար ապրանք կայ։

ՍԵՒ ՁԱՄԻՉ։— Ծախուեցաւ 5800 կենդինար, 32—160 ղուրուշ կենդինարը ըստ տեսակին, ի պահեստի 4000 կենդինար կայ։

ԲԱՁԱՌԻ ՁԱՄԻՉ։ — Ծախուեցաւ 1200 կենդինար 1—2 1)2 ղրուշ օխան ըստ տեսակին։

ԱՖԻՕՆԻ ԿՈՒՏ։ — Ծախուեցաւ 10,000 օխայ 76 փարա օխան։

Ա. Զ. Դ.

M. KREMMER

Դարձեալ դարձեալ վաճառական Պարոն Քրեմմէր պատիւ ունի ծանուցանել թէ, հոկտեմբեր 13/25 շաբաթ երեկոյէն սկսեալ, իր երկաթ սենեակներն, այսինքն Բարալէլ փողոցին վրայի սրահը, նոյնին դիմացի բուն դարձեալ նոյն սենեակը բաց պիտի մնան արդէն հասարակութեան համար մինչև առաւօտ։ Իսկ Բարափանց վրայի մեծ դահլիճը մինչև ժամը 9 միայն բաց պիտի մնայ։

Պ. Քրեմմէր, խիստ կանոնաւոր սպասարկութիւն մը կազմակերպած ֆրանսական եղանակին համար նպարաց քնարի հաւաքածոյներ պատրաստած ըլլալով, կը յուսայ որ, իր արդէն հայ յաճախորդներն ինչպէս սկիզբէն ի վեր նոյնպէս և ներկայ ձմրան եղանակին մէջ գոհութեամբ պիտի յաճախեն իր հաստատութիւնները։

Maladies Secrètes

ԾԱԾՈՒԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Արժատէն կը բժշկուին իմ մեթոտովս՝ որ հիմնուած է գիտական նոր հուզարկութիւններու վրայ, նոյն իսկ եթէ այդ հիւանդութիւնք յուսահատեալ վիճակի մ'ալ հասած ըլլան։ Կը բժշկեմ նաև պատանեկանութեան ժամանակ սերմնահոսութենէ և ղպային տկարութեանց յաւալի հետևանքներն և անկարողութիւնները։

ԳԱՂՏՆԻՔ ԴՈՒՐՍ ՀԱՐՏՈՒԻՐ

Խնդրեմ հիւանդութեան ճիշտ նկարագրութիւնը ղրկել ինձ։

ԴՈԿՏՈՐ ՊԷԼԼԱ

Անդամ բաղմաթիւ գիտական ընկերութեանց

Dr. BELLA

Membre de plusieurs sociétés scientifiques.

6. Place de la Nation 6.

ՓԱՐԻԶ—PARIS

IMPORTANT

EPILEPSIE

Spasmes, Eclampsie et Névroses

Լուսնոտութիւն (սարա)։ Ջղաձգութիւն (սբազմս) և ամէն կերպ Ջղայինհիւանդութիւնք

ՀԻՄՆԱՊԷՍ ԿԸԲՈՒԺՈՒԻՆ իմ մեթոտով։

Դրամական հատուցմունք բժշկուելէ վերջ կը տրուին։ Դարման կը տարուի։ Թղթակցութեան միջոցաւ։

ԲՐՈՆ. ՏՈՔԹՈՐ ԱԼԲԵՐԹ

Prof. Dr. ALBERT

Honoré par la société scientifique française de la Médaille d'or de 1re classe pour mérites distingués.

6. Place du Trône 6.

ՓԱՐԻԶ — PARIS.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԻԱՅՆԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒ

Հեղինակ Թ. ԹԵՐԶԵԱՆ

Այս ընտիր գործն, որ կը բաղկանայ 168 երեսներէ, երկրորդ տպագրութեամբ ի լոյս ընծայեալ է Ա. Ղ. Պարսիզպանեան տպարանէն։ Հեղինակին անունն արդէն վկայութիւն մ'է սոյն գործին օգտակարութեան։ Կը պարունակէ 312 հրահանգք լեզուի և մտածութեան։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Հանդերձ բաղմաթիւ խնդիրներով և վարժութեամբ։

Տպագր. Նշան Կ. Պերպերեան

B. DIOGENIS & C°

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՔ

Վ. ՏԻՕԵԷՆԻ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունինք ծանուցանել մեր յաճախորդաց և ընդհանուր հասարակութեան թէ մեր

ԱՇՆԱՆ ԵՒ ԶՄՐԱՆ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍԸ

տեղի պիտի ունենայ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 15/27 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Մեր վաճառատուներն այցելողները պիտի համոզուին թէ երբէք ի վաճառ հանուած չէին այժմու նորաձևութեանց վերաբերող վաճառքներու այսքան մեծ քանակութիւն և այլազանութիւն մը,

ԱՅՍՊԷՍ ԱԺԱՆ ԳԻՆԵՐՈՎ։

Հաճելի է մեզ ծանուցանել միանգամայն թէ, մեր պատրաստի հանդերձեղինաց հանապազօրեայ այնքան յաւ ու չուտ սպառումը տեսնելով, ստիպուեցանք կրկին մեծութեամբ ընդարձակել մեր կարի գործարանները, իրողութիւն մը՝ որ կարող կընէ մեզ այս վայրկենէս սկսելով, ՌՕՊԱՆԵՐու, ԲՕՍԹԻՄՆԵՐու և ՄԱՆԹՕՆԵՐու և այլոց վերաբերեալ ամեն յանձնարարութիւն կատարել խիստ քիչ ատենի մէջ, որքան և բազմաթիւ և թանկագին ըլլան յանձնարարութիւնք, և միշտ կը յանձնենք այն մասնաւոր վայելուչ ձևերով, որով նշանաւոր են բարիզեան արուեստաւորք, որք մեր Հաստատութեանց համար կաշխատին։

Մինչեւոյն առաւելութիւնն ունեցած է նաև կանանց, փոքրիկ աղջկանց և փոքրիկ տղայոց համար մեր ունեցած Գլխարկներու վաճառատունը։ Փարիզի մէջ առաջին կարգը բռնող ձևերը, բեհեղները և զարդերը հայթայթելու համար մեր ունեցած մասնաւոր խնամքը՝ կարող կընեն զմեզ ամեն կերպով գոհացուցանել մեր յաճախորդներն որք ապահով են մեր վաճառատանց մէջ գլխարկներու եղական զանազանութիւն մը գտնելու։

Իզմիր 9/21 Հոկտ. 1884

Գ. ՏԻՕՆԷՆԻ ԵՒ ԸՆԿ.

KHEDIVIE

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԽԵԴԻՎԻԷ

ԹՂԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԱՐԱԳԸՆԹԱՑ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

առաջին կարգի շոգենաւներով, ընդ մէջ Ալէքսանտրիոյ, Բերբէայի, Իզմիրի, Կ. Պոլսոյ և Փոխադարձաբար։

Պօլսէն կը հանի ամեն ուրբաթ իսկ Ալէքսանտրիայէն կը հանի ամեն շաբաթ օրեր։

Գործակալ
ՖՐԱՆՍՈՒԱ ԻՍՓԷՆՏԷՐ

MOORE'S

ԿԱԼԿԱ

ՍՏԵՊ ՓՈՂԱՐԿԵՐ (ՆԱՍԻԼ) ՀԱՄԱՐ ԱՆԴԻՄԱՌ ԱՌԱՎԵՐՈՒԹԻՒՆ

Գ. Դեղարան «ԼԻՆՏՍԻ ՓԱՄԱՍ»։

Grande Distillerie Centrale de Paris—, Bordeaux, Charanton, Havre & Bruxelles.

—

Eugène de Francony Livourne Bordeaux.

Այն հռչակաւոր գործատանց գինիները, գօնեաքները և ամեն տեսակ անուշ ոգելից ըմպելիներու ամենաընտիր եւ ժան տեսակները կը ծախուին՝

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

մթերանոցը Նուսուֆեան խան Ն° 20

—

ՍԵՂԱՆԻ ԳԻՆԻ

Սալօնիքի, Նիակուսթայի եւ Թէնէտոսի ընտիր գինիներ փոքր տակառներով կը ծախուին Նուսուֆեան Ֆէրխանէն թիւ 20 մթերանոցը։

—

ԹԷՅ

Զինաստանէ և Ճավայէ ուղղակի ներաբերուած թէյերու ամենաընտիր տեսակներ կ'ծախուին խիստ չափաւոր դիներով։

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մթերանոցը, Նուսուֆեան Ֆէրխանէն թիւ 20։

Mc. Caw, Stevenson and Orr d'Islande.

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՆԱՒՈՐ ԱՊԱԿԻՆԵՐ

Ապակիի վրայ գոյներու ամենակատարեալ նմանութիւն։ — Խիստ դիւրինկերպով կը փակցուին։ — Գոյները անաւէր են և երաշխաւորեալ։—Գիները բացառիկ կերպով ժան են։ Ամբողջ Տաճկաստանի և Եգիպտոսի համար միակ գործակալ.

Ց. Դ. ՎԷՄԵԱՆ և ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, Զմիւռնիա, Նուսուֆի Ֆէրխանէն թիւ 20։

Կը ծախուի նմանապէս Գ. Ֆ. Քասարիի վաճառատունը Ֆրանկաց փողոց, ինչպէս նաև Գ. Ա. Նոռոյի և ընկերութեան վաճառատունը, Շիշէճիլէր ճատտեսի։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ.

Ճօն Ա. Ա. Կոռ



Ապահովել ուզողները պէտք է դիմեն առ Գ. Ց. Կ. ՀԻՒՍՆԵԱՆ, Սէֆերեան խանին քով՝ Եսայեանց մաղազան։

ELIXIR DENTIFRICE

ԷԼԻՔՍԻՐ ՏԱՆԹԻՖՐԻՍ ակռայ մաքրող հեղուկին գործածութեամբ, բոլորովին կանցնի ԱԿՌԱՆԵՐՈՒ ՑԱՒԸ

*

ՖԼՈՐԷՏԻՆՏԵԱՆ ԿՐՕՆԱՒՈՐՆԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՄ ՄԱԿԻՒԼՕՄ

Իբր ամենէ մեծ՝վարձատարութիւն Պրուսելի մէջ 1880ին երկու հատ ոսկի չքադրամ ստացած է։ Իսկ սրբոյ Փիէր Պուրսօյի կողմանէ 1873ին հնարուած է

EAU de ZENOBIE

ԶԷՆՈԲԻԱՅԻ ՋՈՒՐԸ

որ մաղերուն իրենց նախկին գոյնը տալու համար եղական ջուր մ'է և քիչ օրուան մէջ արդիւնքը կը տեսնուի։ Գործածութիւնը խիստ դիւրին է։ Այս հեղուկը ներկ չէ, այլ ընտիր դեղախառնը ջուր մը, որ մաղերը զօրացունելով թափիլը կարգելէ և իրենց նախկին գոյնը կուտայ։

*

ԼԱՀՕՌԻ ՓՈՒՏՐԱՆ

վակչող, կակուղ և փայլուն է։ Լահօռի Խոռչային մէջ կը բովանդակին թէ բրինձի փոշին և թէ մինչև հիմա գործածուած փոշ իներուն (փուտրա) ընտիր յատկութիւնները։ Այս փոշին եթէ միայն գործածուի, մորթին դեղեցկութիւն և փայլունութիւն մը կուտայ՝ և կը պահպանէ զայն։ Այս փոշին քսուելէ վերջ պէտք է որ բարակ լաթով կամ կակուղ վրձինով մը սրբուի։

*

ՏՈԲԹՈՐ ՌԻՇԱՐԻՆ ՆԻՐԿԸ

խիստ կատարեալ և ընտիր ներկ մ'է։ Գործածելէ առաջ մաղերը լուալու առանց պէտք կենալու՝ մաղ և մօրուք կը ներկէ և մորթին վրայ ամենեւին բիծ չը ձգեր։

Ընդհանուր գործակալն է Ի Պօրտօ Հիւկիւրի փողոց 3 թիւ, 1807ին հիմնեալ՝ ընկերութիւնն՝

ԱՍԷԿԷՆ

*

Բոլոր ասոնք կը ծախուին Իզմիրի ընտիր հստեղէններ ծախողներուն, դեղաբաններուն, դեղադործներուն և այլն քով։

Ասիական տաճկաստանի համար ընդհանուր գործակալն է

ԺԱՆ Ժ. ՖԻԼԻՓՈՒԶԻ
Իզմիր, Ֆրանկաց թաղ
Ռիւկի Ֆէրխանէն։

ՎԻԷՆՆԱՅԻ ԿԵՆԱՑ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԹՈՇԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

Compagnie d'Assurance Viennoise—Vie et Rentes Viagères-

Վիէննայի Կենաց և Հանգստեան Թոշակի Ապահովութեան Ընկերութիւնը խիստ շահաւոր և դիւրամատչելի պայմաններով ապահովութիւններ կ'ընդունի ամեն կարգի և հասակի անձանց.

Ա. Ուղղակի մահուան դէմ ապահովութիւն։

Բ. Որոշեալ ժամանակէ մը վերջը վճարելի ապահովութիւն։

Գ. Փոքրիկ տղայոց և աղջկանց դրամագլուխ և օժտի ապահով.

Ընկերութիւնը իր մեռ ապահովեալ անձինքը կ'ընդունի իր շահուն իրը ընկեր, և միշտ 3 տարին անգամ մը ապահովեալին վճարելի մէկ տարուան տուրքին վրայ միշտ %0 40 բաժանելի շահ մը երաշխաւորելով։

Ընկերութեանս գլխաւոր և լիազօր Գործակատարները. Ի Պոլիս, Տեարք Լէպէ է Ֆիլ Վիկթորի դրամատունն է։

Զմիւռնիոյ Գործակատար Մ. Օսկար Միրզան Լօքալ Էքզէ Էվանժէլիք Ն° 27։

Եւ որովհետև այս Ընկերութեան մասնաւոր և շահաւոր պայմանները շատ ճիւղերու կը բաժնուի, առ այժմ պէտք է դիմել առ Մ. Նաղարէթ Եաղճեան, Վերատեսուչ Թուրքիոյ, որ յատկապէս պաշտօնով եկած է հոս քիչ մը ժամանակի համար, որպէս զի լիովին պէտք ըլլալիք տեղեկութիւնք գոհացուցիչ կերպիւ լինին։

Գ. Ն. ԼԷՎԻ ՆՈԲՈՒԼՈՅ

ԶՄԻՌՆԻԱ

Ֆրանկաց թաղ, Ն. Աիեսթիի Ֆէրխանէն
(Քափուչիներու եկեղեցին դէմ)

Այս վաճառատան մէջ կը ծախուին, թէ մեծ և թէ փոքր քանակութեամբ կոճակներ, երիզներ, ժապաւէններ, զարդեր, ասեղնագործութիւններ, բուրգ, ասեղ, թաշկինակներ, շապիկներ, վզնոցներ, փողկապներ, գուլպաներ, աղու գլխարկներ, ծաղիկներ, փետուրներ, հովանոցներ, հոտեղէններ, մանկանց խաղալիկներ, մանաղած կտաւներ (մուշէմմա), պատառաքաղ և դանակ, հարմանիկան (արմենիք), կիթառ, քնար, սրինգ, ջէլոնոփէ, և այլն և այլն։

Արժանի մէջիսը 33 զուրուշի հաշով կ'առնուի։

CHEMIN DE FER D'AIDIN

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ, ՍԿՍԵԱԼ 14/26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1884

ՊՈՒՃԱ ԵՒ ՍԷՎՏԻԲԷՕՑ

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ	ԿԻՐԱԿԻՆԵՐ
Իզմիրէն Պուճ. ժամ 6,40.—9.—Կ. Ա.	6,40—9.—10.45 Կ. Ա.
Պուճ. Իզմիր 7,20.—8,25.—9,40 Կ. Ա.	7,20—8,25—9,10—12
Իզմիրէն Սէվտ. ժամ 6,40—9—Կ. Ա.	6,40.—9—10.45 Կ. Ա.
Սէվտիքէօյէն Իզմիր 8—0—9,50.Կ. Ա.	8, 0—9,50—11.45 Կ. Ա.
Իզմիրէն Պուճ. 12,15—4,45—6.30Կ.Ա.	2,30—4. 5—6, 0 Կ. Ե.
Պուճայէն Իզմիր 2, 0—6, 0—7, 0—Կ.	3,40—5,30—6,30—Կ. Ե.
Իզմիրէն Սէվտ. ժամ 4,45*—Կ. Ա.	2,30—4, 5—Կ. Ե.
Սէվտիքէօյէն Իզմիր 5,45*—Կ. Ա.	3,25—5, 0—Կ. Ե.

Ամեն Շաբաթ. Երեքշ. 2.30.—Դարձ. Սէվտ. 3.30 Պուճ. 3,45 Կ. Ե.

*Շաբաթ օրեր 15 վայրկեան ուշ
** » » 30 » »

ՀԱՆԱՊԱԶՕՐ—Սէրսիքէօյի համար	8—0	Կ. Ա.
» Նաղէլիի »	10—10	» »
» Ա.յասուլուքի »	6—40	» »
» Թիրէի »	12—0	Կէսօրէն

Կիրակիները Ա.յոքն Երեքշ. 4,30—Կ. Ա.—Դարձ. 1,30 Կ. Ե.

SMYRNA AND CASSABA RAILWAY

ԴԼԽԱՒՈՐ ԴԻՏ

Սկսեալ 22 Սեպտեմբեր 1884

ԿԱՌՈՒՑԻՆ ԿԸ ՄԵԿՆԻ
ԻԶՄԻՐԷՆ ԱԼԱՇԷՀԻՐ

Կը մեկնի Իզմիրէն	Կ. Ա. 9 30.	Կ. Ե. 1 50.
Կը հասնի Մէնէմէն	» 10 39.	» 2 59.
» Մաղնեսիա	» 11 55.	» 4 14.
Կը մեկնի Մաղնիսայէն Ղասապա	» 12 7.	
» Սալէհլի	Կ. Ե. » 2 23.	
» Ալաշէհիր	» 3 41.	

SMYRNA AND CASSABA RAILWAY

BOURNABAT

ԻԶՄԻՐԷՆ ՊՈՒՐՆԱՊԱՏ

Սկսեալ 22 Սեպտ. 1884

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ	Կէս օրէն ետեւ ժամ
7. 8. 9. 12.	3 15. 4 30. 5 45. 6 45.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ	Կէս օրէն ետեւ ժամ
8. 9. 15 10. 30 12.	2. 20 3. 10 4. 5. 15 6. 30

ՊՈՒՐՆԱՊԱՏԷՆ ԻԶՄԻՐ

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ	Կէս օրէն ետեւ ժամ
7. 30 8. 30 9. 35	1. 30 3. 45 5. 15 6. 15 7. 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ

Կէս օրէն առաջ ժամ	Կէս օրէն ետեւ ժամ
8. 30 9. 45 11.	12. 20 2. 40 3. 30 4. 45 6. 7.

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՏՊԱՐԱՆ, Ի ՍԷՎԼԻ ԽԱՆ ՎԵՐՆԱՑԱՐԿ ԹԻԻ 17